ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՀՁ-22/1 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	Համազգեստ /Իգական սեռի ծառայողների/ - 25 լրակազմ Կիտել՝ միափեղկ, ամենօրյա (համապատասխան լրակազմ ուսադիրներով և թևքանշանով), մուգ կապույտ, կիսաբրդյա (317գ/մք ±3% խտությամբ 67%բուրդ ±3%, 33%Պ/Է ±3%) կտորից, մարմինը կիսագրկող մակերեսով, հետ ծալված օձիքով և սովորական երկկարանի թևքերով, ձախ թևքին կարվում է թևքանշան, որոնք ներքևի հատվածում ունեն 2,5 մմ լայնությամբ կարմիր եզրակար, կողքերից ունի կափույրով ծածկվող թեք կտրվածքով ներկարված գրպաններ, դեպի ձախ կոճկումով միաշարք երեք ոսկեգույն մեծ կոճակներով՝ կնգումի սպիտակ մորթու պատկերով: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում՝սոսնձող կտորով և վուշ-բրդյաքաթանով: Առանձին դետալները նույնպես՝ գրպանների կափույրներ, օձիք կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրդյաքաթանով: Աստառը՝ 90 գ/մք ±3% խտությամբ մուգ կապույտ կտորից-20 հատ: Կիտել՝ երկփեղկ, ամենօրյա (համապատասխան լրակազմ ուսադիրներով և թևքանշանով), մուգ կապույտ (317գ/մք ±3% խտությամբ 67%բուրդ ±3%, 33%Պ/Է ±3%) կտորից, մարմինը կիսագրկող մակերեսով, հաստ փողքերով, հետ ծալված օձիքով և սովորական երկկարանի թևքերով, ձախ թևքին կարվում է թևքանշան, որոնք ներքևի հատվածում ունեն 2,5 մմ լայնությամբ կարմիր եզրակար, կողքերից ունեն կափույրով ծածկվող կտրվածքով ներկարված գրպաններ, երկու կողմերում ունի ծոցագրպան: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում՝ սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները նույնպես՝ գրպանների կափույրներ, օձիք կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Աստառը՝ 90 գ/մք ±3% խտությամբ մուգ կապույտ կտորից: Երկկոճկուն (երկփեղկ)՝ 6 ոսկեգույն

	ալյումինե համաձուլվածքով մեծ կոճակներով՝ կնգոմի սպիտակ մորթու պատկերով տեղադրված երկշարք, թիկնամասի ներքևում՝ առանց կտրվածքի-5 հատ: Բաճկոն՝ մուգ կապույտ /համապատասխան լրակազմ ուսադիրներով/ (Զինվորական քննչական գլխավոր վարչության համար՝ մուգ կանաչ գույնի), 236գ/մք խտությամբ ±3% ,44-տոկոսանոց բուրդ ±3%, 54-տոկոսանոց պոլիէթիլեն ±3%, 2-տոկոսանոց լայկրա ±3% կտորից, կոճկվում է կենտրոնական շղթայով, հետևամասը և առաջամասը՝ վերին կտրվածքով, լանջափեշերի վրա վերևից ուղղահայաց վրադիր գրպաններ են՝ ուղղանկյուն կափույրներով: Բաճկոնի կողային գրպանները՝ շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Բաճկոնի թևքերը նեղ թեզանիքներով, էլաստիկ ժապավենով են: Օձիքը՝ ծալովի: Բաճկոնը գոտիով է՝ կողքերից էլաստիկ ժապավենով ձգված: Ուսադիրների շրջանում՝ երկու փակօղակներ և երկու կամրջակներ՝ ուսադիրների ամրացման համար: Ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև՝ ջակարդե արծաթագույն թելով ասեղնագործ թևքանշան՝ ՀՀ քննչական կոմիտեի խորհրդանիշի պատկերով, 4.5 սմ շառավիղով, Կիսաշրջազգեստ՝ մուգ կապույտ կիսաբրդյա (317գ/մք խտությամբ ±3% 67% բուրդ ±3%, 33%Պ/Է ±3%) կտորից, ուղիղ կարվածքով, երկկողմանի սեղմոններով, աստառով, գոտին՝ գոտեմակօղերով, հետևամասում՝ բացվածքով, կողամասում կոճկվում է մեկ կոճակով և շղթայով: Տաբատ՝ մուգ կապույտ գույնի (317 գ/մք խտությամբ ±3%, 67% բուրդ ±3%, 33% Պ/Է ±3%) կտորից, ուրվագիծը՝ ուղիղ, առանցծալքերի, 2,5 մմ լայնությամբ կարմիր եզրակարով, գոտին գոտեմակողերով, որոնցից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետնամասի կարի վրա: Գուլֆիկը մշակվում է շղթայով և կոճկվում է երկու կոճակով, արտաքին գրպանները թեք են: Գլխարկ(պիլոտկա)՝ Մուգ կապույտ կիսաբրդյա (317 գ/մք խտությամբ ±3%, 67% բուրդ ±3%, 33% Պ/Է ±3%) կտորից: Կազմված է երկարացված հատակի 2 մասից, 2 պատիցև 2 փեշիկից: Վեր ծալված եզրակարերն ավարտվումեն կարմիր մահուդե եզրակով (կանտով): Ձախ կողմում ունի 3 օդանցք: Առջևի կենտրոնական ճակատային մասում ամրացվում է մետաղից պատրաստված ոսկեգույն գլխարկանշան՝ քննչական կոմիտեի խորհրդանիշի շրջանակաձև կենտրոնի ոսկեգույնով երիզված վահանը՝ պատված կնգումի (հայկական կզաքիսի) սպիտակ մորթու պատկերով: Փողկապ՝ մուգ կապույտ,(35% բուրդ ±3%, 65% պ/է ±3%, 294գ/մք ±3% խտությամբ) կտորից, 2 շեղանկյունաձև՝ լայն, կարճ և նեղ, երկարավուն կտորներից, որի նեղ, երկարավուն կտորը գտնվում է լայն, կարճ կտորի վրա: Հանգույցի ներքևի կենտրոնական մասում ամրացվում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի խորհրդանիշի շրջանակաձև կենտրոնի ոսկեգույնով երիզված վահանը՝պատված կնգումի (հայկական կզաքիսի) սպիտակ մորթու պատկերով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՀՁ-22/1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	